Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ
(Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 6 հոկտեմբերի, 2014 թ.)

«Ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ» (Մտթ. Դ 4)։

Գերաշնորհ Սրբազան Հայրեր,
Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր,
Համաժողովի հարգարժան մասնակիցներ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ողջունում և Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ՝ Հայկական գրադարանների միջազգային երրորդ համաժողովի մասնակիցներիդ։

Ուրախ ենք, որ 2009 թվականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի նախաձեռնությամբ գումարված համաժողովն ունեցավ շարունակություն, և այսօր դուք կրկին համախմբվել եք՝ ի խնդիր հայկական գրադարանների գործունեության արդիականացման ու լիարժեք կազմակերպման և արդյունավորման։

Գիրքը մարդկային մշակույթի հնագույն ձեռքբերումներից է, քանզի «ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»։ Գրավոր մշակույթ մեր ժողովուրդն ունեցել է վաղնջական ժամանակներից։ Աստվածատուր շնորհով ունեցանք նաև Մեսրոպյան սքանչելագործ մեր գիրը, որը Աստծո հրեղեն խոսքով սրբեց, լուսավորեց և իմաստացրեց մեր ժողովրդի հոգին։ Մեր իրականության մեջ, ինչպես հոգևոր առատաբուխ ակունքից, սկիզբ առան հայախոս գրքերը, ստեղծվեցին բազում վանական գրադարաններ, որոնք հակառակ դարերի փորձությունների՝ պահպանեցին մեր գրավոր ժառանգությունը և նրա առաքելությունը մեր ժողովրդի կյանքում։ Կրթա-լուսավորչական նշանակությունից բացի մեր գրավոր մշակույթը՝ որպես հոգևոր հզոր ուժ, պահպանել է նաև հայ կյանքի սահմանները։ Արդարև, սուրբ գրական խոսքի համաձայն՝ ոչ միայն հացով կյանք ունեցավ մեր ժողովուրդը, այլև՝ իր հոգևոր արժեքներով՝ գրավոր բարձր մշակույթով ու հարուստ ժառանգությամբ։ Նրանցում մեր հայրենիքն է, մեր սրբություններն են, խաղաղ կյանքի մեր ձգտումները և մեր անսասան հավատքը Աստծո կենարար խոսքի հանդեպ, որը պիտի շարունակի ապրեցնել մեր ժողովրդին ու պահպանել աստվածախնամ ճանապարհներում։

Առաջին հայերեն գրավոր կոթողների պահոց եղավ Սուրբ Էջմիածնի Մատենադարանը, որն այսօր այս գեղեցիկ և արդիական հարկի ներքո

համախմբել է ձեզ՝ մեր գրավոր մշակույթի պահպանման, ներկայացման, ուսումնասիրման անխոնջ նվիրյալներիդ: Մենք վստահ ենք, որ գրադարանային գործի մշակներիդ, հայ գրքի հետազոտողներիդ պարբերաբար Մայր Հայրենիքում մեկտեղումը լավագույնս պիտի օգնի մեր գրավոր ժառանգության արժևորմանը և նրա՝ հոգեխնամ ու ազգապահպան առաքելության զորացմանը: Մեր հոգևոր կենտրոնի, հայրենի և օտար այլ քաղաքների գրադարաններից, մատենադարաններից ու գրապահոցներից այսօր նոր շնչով պետք է շարունակվի մեր գրավոր ժառանգության առաքելությունը:

Աղոթքով առ Աստված վերստին բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնությունը և գնահատանքը՝ մեր ժողովրդին Ձեր մատուցած ազնիվ ծառայության, անձանձիր նվիրումի և նախանձախնդրության համար և հաջողություն մաղթում համաժողովի աշխատանքներին:

Հայրապետական մեր գնահատանքն ենք բերում ՀՀ մշակույթի նախարարությանը՝ համագումարի կայացմանը բերած ջանքերի և աջակցության համար:

Հայրապետական օրհնությամբ Մեր գնահատանքն ենք բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի և ՀՀ Ազգային գրադարանի տնօրինություններին՝ համաժողովի կազմակերպչական աշխատանքները բոլորանվեր հանձնառությամբ և մեծ նախանձախնդրությամբ իրականացնելու համար:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր Զորավոր Աջի ներքո պահի մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի և առատ դարձնի հոգևոր լույսի արգասիքները մեր կյանքում:

Շնորհ և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեան. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ